ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր**

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«16» 06 2022թ.
No 002599

**«ՀԻՊԵՐՆՈՎԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ**
**(Հասցե՝ ՀՀ, Երևան, Նոր Նորք, Բաղյան փ., 9, բն.25)**

Հարգելի՛ պարոն Ալեքսանյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հունիսի 14-ի «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 361-Ա որոշմամբ հարուցված վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 219-Ա որոշման պատճենը:

Տեղեկացնում ենք նաև, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

*Առդիր՝ «2» թերթ:*

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

*Մրցակցության գնահատման և վերահսկողության վարչություն*
*Կատարող՝ Տաթևիկ Հովհաննիսյան, հեռ. (+374 60) 830-840 (235)*

**competition.am կայքում հրապարակման օրը՝ 7 սեպտեմբերի 2022 թվական:**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2022 թվականի թիվ 219-Ա

## ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), 2022 թվականի հունիսի 14-ի նիստում քննարկելով Հանձնաժողովի՝ 2021 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 361-Ա որոշմամբ հարուցված վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի «Երևանի քաղաքապետարանի և մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 361-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 361-Ա որոշում**) հարուցվել է վարույթ (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Այսպես, Երևան քաղաքի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների, հողային պաստառով (գրունտային) փողոցների հիմնանորոգման աշխատանքների, ասֆալտբետոնյա ծածկի ճաքալցման աշխատանքների (այսուհետ նաև՝ **Աշխատանքներ**) ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ **Քաղաքապետարան**) և «Նարիմանյան», «Խաչհար», «Կապավոր», «Ավա-2000», «Լիլիթ-87», «ԱԱԲ Պրոեկտ», «Շինպլյուս», «Արհովշին», «Շիրինշին» (անվանափոխությունից առաջ՝ «Շինֆորում»), «Արարատ-Ճանշին», «Բիլդեր Քոնսթրաքշն» (անվանափոխությունից առաջ՝ «Վահագն և Սամվել»), «Լև-Շին», «Ռուբիկ և Իշխան», «Շինկո», «Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ»», «Էլիտստրոյ», «Տեր-Հայրապետյան Շին», «Մ. Բուատ», «Ապառաժ», «Երվադա», «Երևանյան բազալտ», «Հիպերնովա», «Եղնիկիպես», «Վառշին», «Ֆայլվորդ» սահմանափակ

պատասխանատվությամբ և «Սահակյանշին» և «Ճառագայթ» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ նաև՝ **Ընկերություններ**) վարքագծի և գործողությունների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ առկա է որոշակի օրինաչափություն՝ կապված տարածքների (վարչական շրջանների) աշխարհագրական բաժանման, ինչպես նաև մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման մեթոդների հետ:

Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 7-ին բանավոր լսման է հրավիրել «Խաչհար», «ԱԱԲ Պրոեկտ», «Բիլդեր Քոնսթրաքշն» և «Արհովշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին, իսկ հունիսի 14-ին՝ «Ավա-2000», «Լիլիթ-87», «Շինպլյուս», «Նարիմանյան» սահմանափակ պատասխանատվությամբ և «Սահակյանշին» փակ բաժնետիրական ընկերություններին՝ վարույթի շրջանակներում քննարկվող հարցերի վերաբերյալ հնարավոր այլ տեղեկություններ ստանալու նպատակով:

Այսպիսով, Ընկերությունների բանավոր լսման ընթացքում ներկայացրած դիրքորոշումները վերլուծելու, դրանք գործի փաստական հանգամանքերի հետ համադրելու, անհրաժեշտության դեպքում այլ տեղեկատվություն ձեռք բերելու և այլ գործողություններ իրականացնելու հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն իրականացնելու նպատակով վարույթի իրականացման՝ Օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը բավարար չէ, ուստի առաջացել է Վարույթի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 361-Ա որոշմամբ հարուցված վարույթի ժամկետը երկարաձգել 2022 թվականի հունիսի 14-ից՝ եռամսյա ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՆԱԽԱԳԱՀ** **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հունիսի 15
Երևան